



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “03”. 06. 2016 թ. (արձ. № 10)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թարվերդյան “06”. 06. 2016 թ.
---	---

**ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

**ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Նպատակը և խնդիրները

Մույն քաղաքականության նպատակն է ստեղծել ամուր հիմքեր համալսարանի գիտական և կրթական գործունեության փոխկապակցման և ինտեգրման համար՝ ապահովելով տվյալ գործընթաների միասնությունը և շահակից կողմերի ներգրավվածությունը:

Խնդիրներն են՝

- Գիտական և կրթական գործունեության միջև արդյունավետ և կայուն փոխգործունեության և տրամաբանական փոխկապակցվածության ձևավորումը, դասախոսական կազմի և ուսումնառողների ներգրավումը գիտական, գիտագործնական և գիտա-մեթոդական աշխատանքներում:
- Երիտասարդ մասնագետների վերապատրաստումների իրականացումը կրթության բազմաստիճան համակարգի հենքի վրա ինտեգրված կրթական կառուցվածքի շրջանակներում, ներառելով բակալավրիատը, մագիստրատուրան և ասպիրանտուրան:
- Ֆունդամենտալ և կիրառական աշխատանքների ժամանակակից մակարդակի ապահովումը, նորագույն արդյունքների օգտագործում ուսումնական գործընթացումը:
- Միջազգային ծրագրերի շրջանակներում գիտահետազոտական նախագծերի իրականացումը, ակտիվ ներգրավելով դրանց մեջ ուսանողներին և ասպիրանտներին:
- Գիտահետազոտական աշխատանքների իրականացման ոլորտում միջազգային համագործակցության զարգացումը առաջատար գիտական և կրթական կենտրոնների հետ:

Կիրառման ոլորտ

Մույն քաղաքականությունը կիրառվում է համալսարանի հետազոտական և կրթական ոլորտների վրա և ուղղված է դրանց փոխկապակցման գործընթացի իրականացմանը:

Նկարագրություն

Գիտական և կրթական գործունեության փոխկապակցվածությունը ենթադրում է մի շարք գործընթացների իրականացում, այդ թվում՝

- ուսումնական գործընթացի գիտամեթոդական ապահովվածության համակարգային թարմացումը օգտագործելով ամբիոնների նորագույն հետազոտությունները,
- ամբիոնական հենքի վրա գիտական պրոբլեմային լաբորատորիաներում ուսանողների ակտիվ ուսումնահետազոտական աշխատանքների տարատեսակ ձևերի կազմակերպում և անցկացում (դիպլոմային և կուրսային աշխատանքների (նախագծերի), արտադարական և նախադիպլոմային պրակտիկաների և մասնագետների պատրաստման այլ ձևերի կիրառում),
- դասախոսական կազմի և ուսանողների ներգրավում ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար, դրա հիման վրա դասախոսների և

ուսանողների կողմից գիտական հոդվածների պատրաստում, զեկուցում տարբեր մակար-դակի կոնֆերանսներին (ինքնուրույն և գիտական ղեկավարների հետ համահեղին-նակությամբ), ուսանողների մասնակցությունը գիտական կոնֆերանսներին,

- ուսումնական և հետազոտական գործունեության միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորում համալսարանի գրադարանի էլեկտրոնային ռեսուրսների զարգացման հենքի վրա, ուսանողներին տեղեկատվա-կրթական պորտալներից, համալսարանի կայքից, այլ էլեկտրոնային համակարգերից օգտվելու հնարավորության ըն-ձեռնում:

Քաղաքականության իրականացում

Համալսարանի հետազոտական և կրթական գործընթացների փոխկապակցման գործընթացը պետք է երաշխավորի ՀԱԱՀ գիտակրթական գործունեության զարգացումը և կատարելագործումը:

Պատասխանատվություն

Համալսարանը պարտավոր է ակտիվ ներգրավել ուսումնառողներին և պրոֆեսորադասա-խոսական կազմին կրթական և հետազոտական գործընթացներ և երաշխավորել, որ տվյալ գործընթացների փոխկապակցված են և իրականացվում են իրար համահունչ:

Քաղաքականության վերանայում

Մույն քաղաքականությունը ենթարկվում է վերանայման համալսարանի «Փաստաթղթերի և գրանցումների կառավարում» ընթացակարգի համաձայն:

**ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. Նշանակությունը և կիրառման ոլորտը

1.1. Սույն ընթացակարգի նպատակն է կանոնակարգեր Համալսարանի գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածությունը:

1.2. Սույն ընթացակարգը կիրառվում է Համալսարանի գիտական և կրթական ոլորտների նկատմամբ, և ենթակա է պլանավորման ու իրականացման համալսարանի ռեկտորի, գիտական և ուսումնական գծով պրոռեկտորների և այն պատասխանատուների կողմից, որոնք առնչություն ունեն տվյալ գործընթացի կազմակերպման և իրականացման հետ:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածությունը պայմանավորված է նրանով, որ գիտական գործունեությունը մասնագետների պատրաստման անբաժան մասն է:

2.2. Գիտական աշխատանքը համալսարանի գործունեության կարևորագույն բաղադրիչ մասն է, որը փոխկապակցված կրթական գործունեության հետ: Այն ուղղված է համալսարանում նոր ֆունդամենտալ գիտելիքների ստացմանը, կիրառական խնդիրների նոր լուծումների որոնմանը, բարձր մակարդակի գիտամանկավարժական կադրերի ապահովմանն ու և զարգացմանը և նոր արդյունքների ներդրմանը ուսումնական գործընթաց:

2.3. Համալսարանում ուսումնական և գիտական գործընթացների միասնությունը ապահովվում է հետևյալի հաշվին՝

- Մասնագիտական ամբիոնների հենքի վրա ուսումնագիտական լաբորատորիաների բացումը:
- Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու գործընթացին:
- Գիտական գործունեության արդյունքների օգտագործումը ուսումնական գործընթացում:

3. Նպատակը և խնդիրները

Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակն է նոր գիտելիքների ստացումը և դրանց կիրառումը գործնականում, այդ թվում ուսումնական գործընթացի մեջ:

Սույն ընթացակարգի նպատակն է՝

- Ստեղծել հիմքեր գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ուսումնական գործընթացում կիրառման համար:
- Զարգացնել գիտական ստեղծագործական միջավայր ուսումնառողների շրջանում՝ ուսանողական գիտական ընկերության և գիտության դեպարտամենտի կողմից տարվող աշխատանքների միջոցով:
- Զարգացնել գիտահետազոտական և կրթական գործունեության փոխկապակցվածությունը:

Նշված խնդիրների լուծումը իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- Գիտահետազոտական գործունեության զարգացում մասնագետների պատրաստման ուղղություններին համապատասխան, որը ուղղված կլինի կրթական համակարգի կատարելագործմանը, գիտահետազոտական կադրերի պատրաստման որակի և որակավորման բարձրացմանը:
- Համալսարանի մասնակցությունը գիտական, գիտա-տեխնիկական, ինովացիոն միջազգային ծրագրերին:
- Գիտահետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածության ապահովումը, ուսանողական գիտության աջակցումը և զարգացումը ուսանողական գիտական ընկերության գործունեության շրջանակներում և դրանից դուրս, գիտական գործունեության արդյունքների օգտագործումը ուսումնական գործընթացում:
- Համագործակցության զարգացումը գիտության, կրթության և հետազոտության ոլորտներում տարբեր առաջատար համալսարանների և կազմակերպությունների հետ:

4. Ընթացակարգի նկարագրություն

Համալսարանում գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածությունը բխում է համալսարանի առաքելությունից և ռազմավարական նպատակներից:

4.1. Ուսանողների ներգրավումը հետազոտական գործունեության մեջ

Ուսանողների հետազոտական աշխատանքը ուսումնական, գիտական, մեթոդական և կազմակերպական բնույթի միջոցառումների համալիր է, որը ապահովում է բոլոր ուսանողների ուսուցումը հետազոտությունների հմտություններին ընտրված մասնագիտությանը համապատասխան՝ ուսումնական գործընթացի շրջանակներում և դրանից դուրս:

Ուսանողների հետազոտական աշխատանքը հետապնդում է հետևյալ նպատակները՝

- Ուսանողների շրջանում ստեղծագործական ունակությունների զարգացում:
- Ուսանողների տեսական գիտելիքների հետազոտական ոլորտում ընդլայնում և խորացում:
- Ուսանողների մոտ հետազոտության տարբեր օբյեկտների, սկզբունքների և եղանակների ճանաչման համակարգված մեթոդաբանության ձևավորման գործընթացի նպաստում և աջակցում:
- Ուսումնառողների մոտ ինքնուրույն գիտահետազոտական գործունեության որոշակի գործնական հմտությունների ձևավորում:

- Ուսանողների մոտ սեփական գիտական հետազոտությունների արդյունքների գրագետ ներկայացման կարողության զարգացում (հաշվետվությունների, ռեֆերատների, հոդվածների պատրաստում):
- Ուսանողների շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հմտությունների զարգացում՝ գիտական հետազոտությունների իրականացման և ստացված արդյունքների մշակման ժամանակ:
- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում և կատարելագործում հետազոտական աշխատանքների առավել արդյունավետ կատարման համար:

4.2. ՀԱԱՀ-ում ուսանողների հետազոտական գործունեության զարգացման, խթանման և աջակցման նպատակով՝

- կազմակերպվում և անցկացվում են ներբուհական մրցույթներ, օլիմպիադաներ և ուսանողական հետազոտական աշխատանքների մրցույթներ, ուսանողական գիտական կոնֆերանսներ և սեմինարներ,
- իրականացվում է ուսանողների ընտրություն և ներկայացում միջոցառումների, հանրա-պետական և միջազգային մրցույթներին և օլիմպիադաներին,
- տարեկան հրատարակվում է ուսանողական գիտական աշխատանքների ժողովածուն,
- կազմակերպվում է ուսանողական աշխատանքների հրապարակումները այլ բուհերի գիտական ժողովածուներում:

4.3. Ուսումնական գործընթացի շրջանակներում ուսանողների կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքը ներառում է՝

- գիտական հետազոտությունների տարբեր պարունակող առաջադրանքներ, հաշվարկա-գրաֆիկական և լաբորատոր աշխատանքներ, կուրսային աշխատանքներ/նախագծեր, ավարտական դիպլոմային աշխատանք:
- գիտահետազոտական բնույթի մասնագիտացված աշխատանքներ տարբեր տեսակի պրակտիկաների ժամանակ,
- գիտական հետազոտության անցկացման տեսական և մեթոդական հիմունքների ուսումնասիրում, գիտական փորձի կազմակերպում և պլանավորում, գիտական տվյալների մշակում և այլն:

4.4. Ոչ ուսումնական ժամանակահատվածում ուսանողի կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքը ներառում է՝

- աշխատանքը ուսանողական գիտական ընկերության ֆակուլտետային սեկցիաներում,
- մասնակցությունը համալսարանի կողմից իրականացվող գրանտային գիտահետազոտական թեմաներում:

4.5. Գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածության ապահովման համար համալսարանի մագիստրանտներին և ասպիրանտներին անհրաժեշտ է ներգրավել՝

- Մասնագիտական ամբիոնների կողմից իրականացվող գիտական թեմաներում,
- Համալսարանի կողմից իրականացվող միջազգային գրանտային գիտական ծրագրերում,
- Գիտական թեմաների իրականացման կոնկրետ փուլերի իրականացման գործընթացում,
- Գիտական աշխատանքի ամփոփման, հաշվետվության, գիտական հոդվածի պատրաստման գործընթաց:

Գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածության ապահովման երաշխիք է գիտական արդյունքների ներդրումը համալսարանի կիրառական խնդիրների լուծման, ինչպես նաև ուսումնական գործընթացում օգտագործման համար:

5. Իրականացվող միջոցառումներ

Համալսարանը գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածության ապահովման համար իրականացնում է հետևյալ միջոցառումները՝

- Ուսանողների գիտահետազոտական աշխատանքների զարգացմանը խթանող կազմակերպա-զարգվածային միջոցառումների կազմակերպում՝ մրցույթներ, օլիմպիադաներ, կոնֆերանսներ, ցուցահանդեսներ և այլն: *Պատասխանատուներ՝* գիտական գծով պրոռեկտոր, ՌԻԳԸ-ի նախագահ, ուս. խորհուրդ – միջոցառումների կազմակերպան իրականացման համար:
- Ուսանողների կոնֆերանսներին, օլիմպիադաներին և այլ հետազոտական միջոցառումների ներազգրավման ապահովում: *Պատասխանատուներ՝* ՌԻԳԸ-ի նախագահ, ՌԻԳԸ-ի ֆակուլտետային պատասխանատուներ:

6. Պատասխանատվություններ և իրավասություններ

6.1. Համալսարանում գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածության ապահովման համար պատասխանատու են՝

- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը
- Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորը,
- Գիտության գծով պրոռեկտորը
- Ուսանողական գիտական ընկերությունը
- ՌԻԳԸ-ի ֆակուլտետային պատասխանատուները:

6.2. Գիտական գծով պրոռեկտորը ապահովում է համալսարանի գիտական գործունեության, մասնավորապես ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ գիտական ընկերության գործունեության կոորդինացումը:

6.3. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները նշանակվում են ֆակուլտետների ամբիոնների Ուսանողական գիտական խմբակների ղեկավարներ և պատասխանատու են ամբիոններում ուսանողների հետազոտական գործունեության համակարգման համար: